ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԽԱՂՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-19/2

ք. Երևան «28» օգոստոսի2019թ.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Զ. Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երիտասարդ գինեգործների միավորում» ՀԿ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խոջոյանի, որը գործում է ՀԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ խաղողագործական և գինեգործական մարզերում խաղողագործության և գինեգործության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 14 990 000 (տասնչորս միլիոն ինը հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամսիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ Հասցե՝ ՀՀ, ք Երևան, Մամիկոնյանց 39ա	Երիտասարդ գինեգործների միավորում հասարակական կազմակերպություն Հասցե՝ ՀՀ, ք Երևան, Վազգեն Սարգսյան, 26/3 /2-րդ հարկ/ սենյակ 203
Հ/Հ՝ 1930058282670100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ	Հ/Հ՝ 1930052404140100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00156064	ՀՎՀՀ՝ 02613151
Հեռախոս՝ +374 60 655 885	
Հ. Մուրադյան	Ա. Խոջոյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N
« 28 » օգոստոս 2019թ. կնքված
«ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-19/2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79951120	Կատարողը պետք է 2019 թվականի սեպտեմբերի 7-ին կազմակերպի գինու տոն Արագածոտնի մարզի, Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցու հարակից տարածքում: Տոնը պետք է տեղի ունենա ժամը 15:00-ից մինչև 00:00-ն, Արագածոտնի մարզի, Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցու հարակից տարածքում: Տոնի ընթացքում պետք է իրականացվի կազմակերպչական աշխատանքներ ինչը ներառում է՝ ➢ Ամբողջ տարածքի էլեկտրականության ապահովում (վարդակներ), բոլոր վրաններում լուսավորության կետերի վերաբաշխում: Աշխատանքները պետք է իրականացված լինեն մինչև 03.09.2019թ: ➢ Ամբողջ տարածքի լուսավորության ապահովում (լամպեր և լուսամփոփներ - առնվազն 100 վատտ), բոլոր վրաններում կետերի վերաբաշխում:	դրամ	14 990 000	1	Արագածոտնի մարզի, Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցու հարակից տարածք	07.09.2019թ.

		Աշխատանքները պետք է իրականացված լինեն մինչև 03.09.2019թ: ➢ Խմելու ջրի աղբյուրի ապահովում տոնակատարության տարածքում: Աշխատանքները պետք է իրականացված լինեն մինչև 03.09.2019թ: ➢ 8 հատ բիո զուգարանների ապահովում: Աշխատանքները պետք է իրականացված լինին մինչև 03.09.2019թ: ➢ Բանվորական աշխատուժի (50 անձ) վարձակալություն աշխատանքերի իրականացման համար (տարածքի հարթեցում, բարեկարգում, մաքրում, քարերից հեռացում, էլեկտրականության, լուսավորության գծերի ապահովում, վրանների տեղադրում, ապամոնտաժում, տոնակատարությունից առաջ, ընթացքում և տոնակատարության ավարտից հետո տարածքի մաքրում, դիզայներական և ձևավորման նյութերի, պարագաների, սարքավորումների, գինու արկղերի, բեմի կառուցապատման սարքավորումների և մասերի տեղափոխություն տոնակատարության տարածքում և այլ հարակից աշխատանքներ) ➢ Նվազագույնը 300 կգ սառույցի ապահովում տոնի ամբողջ ընթացքում ➢ Տարածքի բարեկարգում, հարթեցում: Աշխատանքները պետք է իրականացված լինեն մինչև 02.09.2019թ: ➢ 55 հատ 3*3մ վրան, ջրակայուն, շրջանակը՝ մետաղյա: Վրանները պետք է լինեն սպիտակ գույնի ծածկով՝ առանց վնասված հատվածների, ընկերությունների արտադրանքը ներկայացնելու նպատակով: Վրանները պետք է ներկայացվեն Պատվիրատուին մինչև 03.09.2019թ:					

		➢ 120 հատ մոխրագույն պլաստմասե աթոռ՝ հենակով, չորս ոտքով, առանց արմնակալների, 80-120 սմ բարձրությամբ: Աթոռները պետք է տրամադրվեն մինչև 06.09.2019թ: ➢ 75 հատ սեղաններ, բարձրությունը՝ 75 սմ, երկարությունը՝ 1.80սմ, լայնությունը՝ 80 սմ, Նյութը՝ մետաղ և պլաստմաս: Սեղանները պետք է տրամադրվեն մինչև 06.09.2019թ: ➢ Հանգստի գոտու կառուցապատում և ձևավորում գինու թեմայի մեջ՝ նախատեսված 100 անձի միաժամանակյա նստելու համար: Գոտին պետք է ներառի 40 հատ փայտյա պալետներ, չափերը՝ 1.2մ*1,2մ որպես սեղան ծառայելու նպատակով, 10 հատ փայտից սեղաններ՝ նախատեսված 4-5 հոգու համար, 100 հատ պլաստմասե հենակով և մետաղյա ոտքերով միագույն աթոռներ՝ 80-120 սմ բարձրությամբ, 10 հատ սպիտակ ծածկեր՝ վրաններ, յուրաքանչյուրի չափը՝ 4*4մ, 12 հատ գինու մեծ տակառներ՝ 600 լ տարողությամբ, 100 հատ ծղոտե տուկ՝ ստանդարտ չափի: Կատարողը պետք է ապահովի հանգստի համար նախատեսված տարածքը հոսանքի աղբյուրով և 200մ էլեկտրականության լարով, որը զարդարված կլինի դեկորատիվ լույսերով: Էլեկտրական լարի վրա դեկորատիվ լույսերի հեռավորությունը չպետք է գերազանցի 40սմ: Տարածքը պետք է ձևավորված լինի 200մ երկարությամբ հաստ ծղոտագույն պարաններով՝ որի դիզայնը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Ամբողջական աշխատանքները հանգստի գոտու համար պետք է իրականացվեն մինչև 07.09.2019թ: ➢ Երաժշտական մասի ապահովում, որը պետք է ներառի՝ ➢ Հաղորդավար					

		➢ 3 երգիչներ ազգագագրական երգացանկով, որոնց ընդհանուր կատարումները պետք է լինեն նվազագույնը 1,5 ժամ տևողությամբ տոնի ընթացքում ➢ Հայկական պարային համույթ՝ նվազագույնը 20 անձի մասնակցությամբ ➢ Էթնո բենդի մասնկացություն՝ նվազագույնը 1 ժամ տևողությամբ: ➢ Բեմի կառուցապատում, սարքավորումներով հագեցում, լուսային էֆեկտների ապահովում, որը պետք է ներառի՝ ➢ Բեմի լուսավորության՝ 80 հատ ստատիկ (statics) լույս յուրաքանչյուրը 19RGBV, 30 վատտ հզորությամբ, 4-ը 1ում 6-60°,պիքսելների կառավարման 4 , 36 հատ շարժական (moving) լույս՝ MovinHead 330 վատտ հզորությամբ X8HRI Hybrid Projector, 3-36^0 եզրագծային խոշորացում,3 ° նեղ ճառագայթի անկյուն, Վեց ճառագայթների իջեցուցիչով (իջեցված մինչև 0,5°), CMY գունային խառնուրդ, 15 գույն 3 անիվով, 2 CTO ֆիլտրերով, պտտվող գոբոյի անիվ ՝ 8 փոխանակելի ապակյա գոբոն 10 հատ էֆեկտներով (effects) լույս դինամիկ էֆեկտներ, Փոփոխական ֆլեշ ՝ 0 - 650 մ/վ (50 Հg մատակարարմամբ), կամ 0 - 530 մ/վ (60 Հg մատակարարմամբ) Strobe ինտեսնիվությունը ՝ 0 - 25 ֆլեշ / վայրկյան (50 Հg մատակարարմամբ), ➢ Ձայնային համակարգ՝ 1 հատ ակուստիկ համակարգ (PA System) 12000 վատտ հզորությամբ և հետևյալ պարամետրերով ՝ 2 x 12" woofers, 4 x symmetrical 6.5" midranges, and 2 x 2" drivers. 2200W RMS, 1 հատ FOH 1000 վատտ հզորությամբ, անլար մոդեմ, 1 հատ backline՝ ատիվ բեմային 700 վատտ ուժեղացուցիչով և 22" x 17" Bass drum with TH945B double tom holder, 10"					

		x 07" Tom tom, 12" x 08" Tom tom, 16" x 15" Floor tom, 14" x 5.5" Snare drum պարամետրերով ➢ 1 հատ հիմնական էկրան՝ 7*4 մ չափով, 14000 վատտ հզորությամբ ➢ 2 հատ կողային էկրան՝ 5,5*3մ չափով, յուրաքանչյուրը 9000 վատտ հզորությամբ ➢ Բեմ 8*9մ չափով ➢ Ֆերմա տանիք՝ trus 8*10 H7 մ ➢ Ֆերմա կողային՝ trus 6 H7 մ ➢ Ճարտարապետական լուսավորություն՝ 80 հատ յուրաքանչյուրը 200 վատտ հզորությամբ ➢ Տարածքի լուսավորություն՝ 200 հատ յուրաքանչյուրը 150 վատտ հզորությամբ ➢ Տեխնիկական անձնակազմ՝ 1 ծրագրի ղեկավար, 1 ձայնային ռեժիսոր, 1 լուսային օպերատոր, 2 backline ինժեներ, 6 լուսային տեխնիկ, 4 ձայնային տեխնիկ, 8 կոնստրուկտոր, 6 հոգուց կազմված բանվորական աշխատուժ ➢ Բեռնափոխադրում ➢ 130 կՎՏ եռաֆազ հոսանք՝ հաստատուն 380 վոլտ լարումով Ամբողջական աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 06.09.2019թ, ժամը՝ 12:00-ը: ➢ **Տպագրական նյութերի ապահովում՝** ➢ Միջոցառման լոգոյի մշակում ➢ 60 հատ մասնակից ընկերությունների, հովանավորների լոգոների դիզայն և տպագրություն, չափը՝ 3մ*30սմ, նյութը՝ բաներ: Մինչև տպագրությունը՝ Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի դիզայնի 3 տարբերակ, որից Պատվիրատուն կընտրի մեկը: Ընտրված տարբերակը Պատվիրատուի կողմից արված նկատառումների					

		հիման վրա պետք է մշակվի և ներկայացվի վերջնական հաստատման: ➢ 4000 հատ ինֆորմացիոն բուկլետների երկկողմանի տպագրություն և դիզայն, էջերի քանակը՝ 2, չափը՝ 100*210մմ, գունայնությունը՝ 4+4, էջերի թուղթը՝ 170գ, թուղթը կավճապատ, փայլուն: Մինչև տպագրությունը՝ Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի դիզայնի 3 տարբերակ, որից Պատվիրատուն կընտրի մեկը: Ընտրված տարբերակը Պատվիրատուի կողմից արված նկատառումների հիման վրա պետք է մշակվի և ներկայացվի վերջնական հաստատման: ➢ 1 հատ պրես վոլի (press wall) դիզայն, տպագրություն և տեղադրում մետաղյա հենակների վրա, մեկ կողմանի, չափը՝ 4*2մ, նյութը՝ բաներ: Մինչև տպագրությունը՝ Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի դիզայնի 3 տարբերակ, որից Պատվիրատուն կընտրի մեկը: Ընտրված տարբերակը Պատվիրատուի կողմից արված նկատառումների հիման վրա պետք է մշակվի և ներկայացվի վերջնական հաստատման: ➢ 10 հատ ցուցանակների դիզայն և տպագրություն, միակողմանի, չափը՝ 80*120սմ, նյութը՝ բաներ Բոլոր տպագրական նյութերը պետք է տրամադրվեն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում: ➢ Ֆոտո և վիդեո նկարահանում տոնի ամբողջ ընթացում: Նկարահանումը պետք է իրականացվի թվային ֆոտո և վիդեո տեսախցիկներով, ինչպես նաև դրոնի միջոցով: Ֆոտոները պետք է նկարահանվի առնվազն՝ 7360*4912 ֆորմատով, Ֆոտոյի տրամադրման եղանակը՝ JPG և RAW ֆորմատով, ֆոտոյի մշակման ծրագրերը՝ ֆոտոշոփ ծրագրի միջոցով, ֆոտոների նվազագույն քանակը՝ 1000հատ՝ յուրաքանչյուրը 2 ֆորմատով: Վիդեոն պետք է լինի առնվազն full HD,					

		վիդեոյի տրամադրման եղանակը՝ կրիչով AVI և MP4 ֆորմատով: Վիդեոյի մշակում համապատասխան ծրագրերի միջոցով: Դրոնով նկարահանումը պետք է լինի առնվազն full HD, վիդեոյի տրամադրման եղանակը՝ կրիչով AVI և MP4 ֆորմատով: Վիդեոյի մշակում համապատասխան ծրագրեր միջոցով: Կատարողը պետք է տրամադրի վիդեոյի և դրոնի կողմից նկարահանված, մշակված և մոնտաժված տարբերակ ՝ պրոմո տեսահոլովակի տեսքով՝ առնվազն 1 րոպե տևողությամբ, ինչպես նաև նկարահանված ամբողջ ընթացքը: Ֆոտոները պետք է տրամադրվեն տոնին հաջորդող աշխատանքային օրը: Վիդեո տեսահոլովակը պետք է տրամադրվի տոնին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: Բոլոր նկարների հեղինակային իրավունքը պետք է փոխանցվի հիմնադրամին: ➢ 1000 հատ գինու բաժակների ձեռք բերում: Բաժակը պետք է լինի թափանցիկ, ապակյա, 300մլ տարողությամբ, բարձրությունը 18սմ: Մինչև բաժակների ձեռք բերումը՝ Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի բաժակի 3 տարբերակ, որից Պատվիրատուն կընտրի մեկը: Բոլոր բաժակների վրա պետք է տպագրված լինի փառատոնի լոգոն: Ընտրված լոգոյով բաժակի տարբերակը Պատվիրատուի կողմից արված նկատառումների հիման վրա պետք է մշակվի և ներկայացվի վերջնական հաստատման: Բաժակները տպագրված վիճակում պետք է տրամադրվեն Պատվիրատուին մինչև 05.09.2019թ ➢ 1000 հատ կտորից պարկեր՝ գինու ապակյա բաժակների համար: Պարկերը պետք է լինեն բիազ կտորից, չափերը 25*14սմ՝ , պարկի վրա տպագրությունը պետք է լինի A6 չափի՝ տպագրված					

		Պատվիրատուի կողմից տրամադրված պատկերներով կամ լոգոներով: Մինչև տպագրությունը՝ Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի դիզայնի 3 տարբերակ, որից Պատվիրատուն կընտրի մեկը: Ընտրված տարբերակը Պատվիրատուի կողմից արված նկատառումների հիման վրա պետք է մշակվի և ներկայացվի վերջնական հաստատման: Պարկերը տպագրված վիճակում պետք է տրամադրվեն Պատվիրատուին մինչև 05.09.2019թ ➢ 10 հատ ավտոբուսի վարձակալություն փառատոնի այցելուներին տեղափոխելու համար Երևան-Աշտարակ-Երևան ուղղություններով: Ավտոբուսը պետք է լինի ոչ պակաս քան 25 նստատեղից բաղկացած, ունենա օդորակիչ: Ավտոբուսները պետք է աշխատանքը իրականացնեն փառատոնի ամբողջ ընթացքում: Տրանսպորտային միջոցը պետք է ունենա փափուկ և չվնասված նստատեղեր, լինի տեխնիկապես սարքին, սրահը լինի մաքուր, առանց արտաքին վնասվածքների, հագեցած օդորակիչով, անվադողերը պետք է ունենան առավելագույնը 30% մաշվածություն: ➢ Պատվիրատուի կողմից ստեղծված սոցիալական էջերում փառատոնի ինֆորացայի տարածում գովազդի միացմամբ՝ Պայմանագրի կնքման օրից 1 ամիս տևողությամբ: ➢ Տարածքի դիզայներական աշխատանք, որը պետք է ներառի՝ ➢ 15 հատ լոգոյի տպագրություն, յուրաքանչյուրի չափը՝ 2*1,5մ, նյութը՝ պոլիվինիլքլորիդ, տեսակը՝ կոշտ ➢ 4 հատ մետաղյա և փայտյա կարկաս՝ վրան դիզայներական աշխատանքերի հավաքման համար՝ 5մ բարձրությամբ					

		➢ 4 հատ էլեկտրական ջահ հաստ դիզայներական պարաններով կախելու համար , որոնք պետք է ծառայեն որպես լուսավորության աղբյուր ➢ Խաղողի վազի մատեր ➢ 120 կգ թարմ, ամբողջական, չվնասված, առանց ճաքերի և խալերի սեզոնային մրգեր (խնձոր,դեղձ,սալոր,տանձ)՝ հավասարազոր մասնաբաժիններով: ➢ 100 կգ թարմ, ամբողջական, չվնասված, առանց ճաքերի և խալերի սև և սպիտակ խաղող: ➢ Սեզոնային թարմ բնական ծաղիկներ ➢ 10 հատ ապակյա մեծ տարաներ ծաղիկների համար: ➢ 100 կապ ցորենի հասկեր ➢ 200մ հայկական զարդանախշ կտոր ➢ 200մ կանաչ գազոն՝ տարածքի կանաչապատման համար ➢ 40 հատ փայտից արկղ մրգերը ձևավորելու համար ➢ 10 հատ քարային ծաղկաման ➢ 3 հատ մեծ լամպեր, 3մ բարձրությամբ՝ յուրաքանչյուր լամպի վրա 3 լուսավորվող գնդիկ ➢ 20 հատ ջահ (փակեռ)՝ նվազագույնը 1,5 մ բարձրությամբ, որոնք պետք է վառվեն միջոցառման ողջ ընթացքում ➢ 10 հատ էլեկտրականությամբ կրակի տեսքով դեկորներ՝ մուտքի համար , յուրաքանչյուրի տրամագիծը՝ 4,5մ ➢ 1 հատ լոգոյի տպագրություն, չափը՝ 3,5*2մ, նյութը՝ պոլիվինիլքլորիդ, տեսակը՝ կոշտ ➢ 4 հատ փայտյա չաների ապահովում , յուրաքանչյուրի տրամագիծը 1մ: Չաները պետք է նախատեսված լինեն ոտքերով ջարդման համար՝ հյութի դուրս հոսման հնարավորությամբ: Կատարողը պետք է իրականացնի					

		բոլոր նյութերի, տեխնիկայի և այլ ծառայությունների երկկողմանի փոխադրումները: ➢ Երեխաների համար նախատեսված տարածքի կանաչապատում գազոնով, չափը՝ 12*6մ, վրան՝ 1 հատ չափը՝ 12*6մ , վրանի գույնը՝ սպիտակ, անջրանցիկ: Կատարողը պետք է ապահովի երեխաների համար նախատեսված տարածքը հոսանքի աղբյուրով և 200մ էլեկտրականության լարով, որը կահավորված լինի դեկորատիվ գունավոր լույսերով: Էլեկտրական լարի վրա գունավոր լույսերի հեռավորությունը չպետք է գերազանցի 40սմ: Տարածքը պետք է լինի 200մ երկարությամբ ձևավորված հաստ ծղոտագույն պարաններով: Երեխաների զվարճանքի 2 կենտրոնների ներկայացվածություն՝ փառատոնի ամբողջ ընթացքի համար, որտեղ կապահովվի երեխաների ժամանցը տոնի ողջ ընթացքում: Կենտրոնները պետք է կրեն պատասխանատվություն երեխաների անվտանգության համար տոնի ողջ ընթացքում: Կատարողը պետք է ապահովի կենտրոնների աշխատակիցների և կենտրոններում օգտագործվող նյութերի տեղափոխումը, ինչպես նաև նյութերի անսահմանափակ հասանելիությունը տոնի ողջ ընթացքում: ➢ Կատարողը տոնի ընթացքում պետք է իրականացնի գինու վարպետաց դաս մասնագետի կողմից: ➢ Կատորողը պետք է իրականացնի խողողագործական և գինեգործական շրջանների առանձնահատկություն-ների ներկայացում ➢ Բոլոր վրանները պետք է լինեն դասավորված և ձևավորված յուրաքանչյուր մարզին բնորոշ գինեգործական առաձնահատկություններով ➢ Յուրաքանչյուր մարզը ներկայացնող տաղավարի կողքին պետք է լինեն տեղադրված ինֆորմացիոն					

		ցուցանակներ, որոնք կպարունակեն պատմական տեղեկատվություններ ՀՀ գինեգործության և խաղողագործության վերաբերյալ: ➢ Բոլոր օգտագործվող նկարների և վիդեոների օգտագործման իրավունքը պետք է փոխանցվի Հիմնադրամին:					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք Երևան, Մամիկոնյանց 39ա

Հ/Հ՝ 1930058282670100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 00156064
Հեռախոս՝ +374 60 655 885

_____ Հ. Մուրադյան
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Երիտասարդ գինեգործների միավորում հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ՀՀ, ք Երևան, Վազգեն Սարգսյան, 26/3 /2-րդ հարկ/ սենյակ 203
Հ/Հ՝ 1930052404140100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02613151

_____ Ա. Խոջոյան
Կ.Տ

Հավելված N 2
«28» օգոստոս 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951120	ՀՀ խաղողագործական և գինեգործական մարզերում խաղողագործության և գինեգործության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	14 990 000	14 990 000	14 990 000	14 990 000	14 990 000

*** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք Երևան, Մամիկոնյանց 39ա

Հ/Հ՝ 1930058282670100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 00156064
Հեռախոս՝ +374 60 655 885

Զ. Մուրադյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Երիտասարդ գինեգործների միավորում հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ՀՀ, ք Երևան, Վազգեն Սարգսյան, 26/3 /2-րդ հարկ/ սենյակ 203
Հ/Հ՝ 1930052404140100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02613151

Ա. Խոջոյան

Կ.Տ

Հավելված 3
« » օգոստոս 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	*ըստ* պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » օգոստոս 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն